

- Բուժման ընթացքում, յուրաքանչյուր երկրորդ շաբաթվա վերջին, դեղամիջոցի տարան ներկայացնել ծառայություն մատուցողին և տեսախցիկի առջև արձանագրել դեղամիջոցի տարան, շտրիխ-կոդը և դեղամիջոցի ֆասցած քանակը:

- Օրագրի շրջանակներում ստացած դեղամիջոցը իրացնել/վաճառել/զիջել ծրագրին չմասնակցող այլ շահառուի:
- Դեղամիջոցը կամ դրա փաթեթը (տուփ, տարա, շտրիխ-կոդի կաշուն թուղթ) Փսասել, կեղծել, կեղծելու փորձ անել:
- Պացիենտին դեղի հատկացման ժամանակ, բացառություն հանդիսացող դեպքերը քննարկվում են անհատական ռեժիմով, հանձնաժողովի կողմից:
- Բուժման ռեժիմի և պարտադիր պայմանների խախտումների արձանագրման, նաև բուժման չորրորդ շաբաթվա ժամկետին HCV RNA անհամապատասխան/ կասկածելի ցուցանիշի արձանագրման դեպքում, պացիենտին դեղամիջոցի հատկացման կարգը կփոխվի և կիրականացվի DOT սկզբունքով, ամեն օր ծառայություն մատուցողի մոտ բուժանձնակազմի և տեսախցիկի հսկման ներքո:

Բուժման մշտադիտարկումը ենթադրում է սահմանված պարբերականությամբ, բուժման ընթացքի մշտադիտարկման համար պարտադիր հետևյալ հետազոտությունների անցկացում.

- այցելություն բժշկին,
- արյան մեջ HCV ԴՆԹ-ի քանակական սահմանում PCR մեթոդով,
- արյան ընդհանուր հետազոտություն, լյարդի ֆունկցիոնալ թեստեր (ALT, AST հետազոտություններ), բիլիռուբինի (ուղղակի և ընդհանուր), կրեատինինի, TSH որոշում,

- Բուժման ընթացքում բժշկի կողմից կիրականացվի ընկճվածության մշտադիտարկում, բուժման ռեժիմի պահպանության վերահսկում և կողմնակի էֆեկտների մշտադիտարկում:

**Ախտորոշման բաղադրիչով նախատեսված
հետազոտությունների ֆինանսավորման կարգը.**

Այստորոշման բաղադրիչի շրջանակներում պացիենտների կողմից համավճարը կազմում է 70%: «Մոցիալապեն անապահով ընտանիքի տվյալների միասնական բազայում» հաշվառված այն ընտանիքի անդամների համար, որոնց վարկախաշային միավորը չի գերազանցում 70 000-ը, համավճարը կազմում է 30%:

ԲՈՒԺՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԸ:

Ծրագրի շահառուների՝ բուժման բաղադրիչով սահմանված դեղամիջոցներով ապահովումն իրականացվում է անվճար (առանց համավճարի):



www.moh.gov.ge

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՏՆԴԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ԾԱՆՈԹԱՑԵ՛Ք ՀԵՏԵՑԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ՝

www.hepatiti.ge



საქართველოს შრომის,
ჯანმრთელობისა და
სოციალური დაცვის
საბინისტრო

ር ረድግህናቱስታ
ቦህጻህቡቡህ
ህቡህጸቱን ቀቡቲ

ԻՆՉ ԵՆ ՆԵՐԱՌՈՒՄ Ը ՀԵՊԱՏԻՏԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ
ՓՈՒԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ:

Ծրագրով նախատեսված ծառայությունը ներառում է.

- ա) C հեպատիտով հիվանդ անձանց ախտորոշում.
1) մինչև բուժման մեջ ներգրավելը, 2) բուժման
գործընթացի մշտադիտարկման համար պարտադիր
հետազոտությունների անցկացում:
բ) C հեպատիտով հիվանդ անձանց բուժում C
հեպատիտի բուժման դեղամիջոցներով:

**Ո՞վ ԿԱՐՈՂ Է ՕԳՏՎԵԼ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉԻՑ:**

Վրաստանի քաղաքացին, ով հետազոտում է անցել C հեպատիտի վարակի դեմ հակամարմինների որոշման նպատակով արագ/պարզ կամ/և իմունոֆերմենտային անալիզի (ԻՖՄ) մեթոդով և ստացել է դրական պատասխան, կարող է ծրագրի շրջանակներում անցկացնել մինչև բուժման մեջ ներգրավվելն անհրաժեշտ այլ հետազոտություններ:

ՈՐ ՀԵՏԱԶՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԱՆՑԿԱՅՎՈՒՄ
ՄԻՆԶԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ
ՄԵԶ ՆԵՐԳՐԱԿԵԼԸ

Մինչև բուժման մեջ ներգրավվելն անհրաժեշտ այլ հետազոտություններն անց են կացվում հետևյալ սկզբունքով.

- այցելություն բժշկին,
- HCV ԴՆԹ-ի որակյան արդյունք ունեցող պացիենտների

մոտ անց են կացվում արյան ընդհանուր հետազոտություն, լյարդի ֆունկցիոնալ թեստեր (ALT, AST հետազոտություններ) և լյարդի ֆիբրոզի աստիճանի որոշում FIB-4 թեստի հաշվումով:

- Այն դեպքում, եթե FIB4 միավորը 1.45 - 3.25 ցուցանիշների միջև է, պացիենտը լրացուցիչ լյարդի էլաստոգրաֆիա է անցնում:

Լյարդի ֆիբրոզի F3, F3-F4 և F4 աստիճան ունեցող պացիենտներն անցնում են հետևյալ հետազոտությունները.

- HCV գենետիկական տիպի որոշում PCR մեթոդով,
- HBsAg, Anti-HBs, G-GT, հիմնային ֆոսֆատազա, բիլիռուբին (ուղղակի և ընդհանուր), կրեատինին, գլյուկոզա, ալբումին INR, ANA, TSH, որովայնի խոռոչի ուլտրաձայնային հետազոտություն,
- HCV վարակով կլինակապես նշանակալի էքստրահեպատիկ դրսևորումներով պացիենտները ենթարկվում են բաղադրիչով նախատեսված բոլոր հետազոտություններին:

ՄԻՆԶԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԵԼԸ.

Պացիենտը պետք է դիմի ծրագիրը մատուցող հաստատությանը (ըստ ցանկության): Ընտրելուց հետո ծառայություն մատուցող հաստատությունների ցանկը կիրառարակվի Նախարարության կայքում www.moh.gov.ge: Բացի այդ, լրացուցիչ տեղեկություններ կստանաք թեժ գծից՝ 1505:

ԻՆՉ Է ԵՆԹԱՐՈՒՄ ԲՈՒԺՄԱՆ ԲԱՂԱՐԻՉԸ

Բուժման բաղադրիչը ենթադրում է C հեպատիտով հիվանդ անձանց ապահովում C հեպատիտի բուժման դեղամիջոցներով, մասնավորապես՝ ա) սոֆոսբուվիրով, բ) պեգիլավորված ինտերֆերոնով և գ) ռիբավիրինով:

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՕԳՏՎԵԼ ԲՈՒԺՄԱՆ ԲԱՂԱՐԻՉԻՑ:

Բուժման բաղադրիչից կարող են օգտվել Վրաստանի քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ ունեցող անձինք, ծրագրի մեջ պացիենտի ներգրավման չափանիշների նախատեսմամբ:

ԲՈՒԺՄԱՆ ԲԱՂԱՐԻՉԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

ա) Պացիենտը պետք է գրանցվի ՀԻԲԱ Մոցիալական ծառայությունների գործակալությունում (Թբիլիսիում՝

Նախարարության ընդունարանում կամ Մոցիալական ծառայությունների գործակալության շրջանային կենտրոններում, տարածաշրջաններում՝ Տարածաշրջանային կենտրոններում), ուր պացիենտը կամ նրա օրինական ներկայացուցիչը պետք է ներկայացնեն տեղեկանք առողջական վիճակի մասին՝ ձև NIV-100/ա (բնագիրը), բուժման մեջ ներգրավվելուց առաջ անցկացված հետազոտությունների փաստաթղթերը (թույլատրելի է միայն Վրաստանում գործող օրենսդրության շրջանակներում համապատասխան գործունեության իրավունք ունեցող հաստատությունում անցկացված հետազոտություններ ներկայացնելը), անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լրացնի համապատասխան հայտաձև: Բացի այդ, պացիենտն ընտրում է ծառայություն մատուցող այն հաստատությունը, որտեղ ցանկանում է ստանալ ծառայությունը:

բ) Գրանցված պացիենտի փաստաթղթերը քննարկվում են հանձնաժողովում և դրական որոշման դեպքում, տրվում է համաձայնության նամակ:

գ) Պացիենտի բուժումը սկսելու համար համաձայնության նամակ ստանալուց հետո, 7 օրացուցային օրվա ընթացքում պետք է դիմի համապատասխան հաստատությանը: Հակառակ դեպքում, համաձայնության նամակը չեղյալ կհամարվի:

ՁԵՎ NIV-100/ա-Ի ՀԱՆԴԵՊ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ:

- Ձև NIV-100/ա-ն պետք է տրված լինի ծառայությունը մատուցող հաստատության կողմից և ներառի տեղեկություններ անցկացված հետազոտությունների, դրանց արդյունքների, նաև նշանակումների (դեղամիջոցների և դեղաչափերի մատնանշմամբ) և բուժման կուրսի տևողության մասին:
- Ձև NIV-100/ա-ին պետք է կցված լինեն հետևյալ ախտորոշիչ հետազոտությունները (անցկացման ամսաթվերի և արդյունքների մատնանշմամբ)՝ HCV ԴՆԹ-ի քանակական, գենետիկական տեսակի, լյարդի ֆիբրոզի աստիճանի հետազոտություններ, նաև՝ արյան ընդհանուր հետազոտություն, ALT, AST, HBsAg, Anti-HBs, G-GT, հիմնային ֆոսֆատազա, բիլիռուբին (ուղղակի և ընդհանուր), կրեատինին, գլյուկոզա, ալբումին INR, ANA, TSH, որովայնի խոռոչի ուլտրաձայնային հետազոտություն,
- Բուժման մեջ ընդգրկվելու անհրաժեշտ հետազոտությունների (բացի գենետիկական տիպից) վավերական ժամկետը կազմում է ոչ ավել, քան 3 ամիս:

ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ.

- Բուժման պոտենցիալ թեկնածու են բոլոր ակտիվ HCV վարակով պացիենտները, ովքեր բուժման ցանկություն ունի և չունեն C հեպատիտի բուժման դեղամիջոցների հակացուցում: Մասնավորապես, պացիենտները, որոնք երբեք չեն անցել հակավիրուսային բուժում և պացիենտները, որոնք անցել են հակավիրուսային բուժում, սակայն այն անհաջող է եղել:
- Հակավիրուսային բուժումը սկսելու և պացիենտների ընտրության համար գերապատվությունը շնորհվում է հետևյալ խմբերին.
 - պացիենտներ լյարդի կոմպենսացված ցիրոզով (F4),
 - պացիենտներ լյարդի հեռու գնացած ֆիբրոզով (F3),
 - պացիենտներ լյարդի դեկոմպենսացված ցիրոզով (լյարդի փոխապատվաստման թեկնածուներ),
 - պացիենտներ լյարդի փոխապատվաստումով և HCV ռեինֆեկցիայով (կրկնավարակ),
 - պացիենտներ HCV վարակի կլինիկորեն նշանակալի էքստրահեպատիտային դրսևորումներով,
 - պացիենտներ ՄԻԱՎ և/կամ HBV կոինֆեկցիայով (զուգակցված վարակ):

ՈՐՏԵ՞Ղ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻՆ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏՎԱՑՈՒՄԸ.

- պացիենտների բուժման մեջ ներգրավումն իրականացվում է ծառայություն մատուցող հաստատությունում՝ պացիենտների կողմից համաձայնության նամակի և ինքնությունը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում,
- ծառայություն մատուցողը պացիենտին պեզիլով ինտերֆերոն և ռաբիվիրին է հատկացնում բուժման սխեմային համապատասխան քանակությամբ (ոչ ավելի, քան մեկ ամսվա պաշար),
- ծառայություն մատուցողը սոֆոսբուվիրը հատկացնում է մեկ տարա (28 հաբանոց) քանակով: **Պարտադիր է, որ տարան բացվի տեղում և առաջին հաբը պացիենտն ընդունի բուժանձնակազմի ներկայությամբ, տեսախցիկի հսկողության ներքո:**

Պացիենտին փոխանցվում է տարան, որի մեջ կա 27 հաբ սոֆոսբուվիր:

- ծառայություն մատուցող հաստատությունում դեղամիջոցը տրվում է ամեն օր: